



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՁԻ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 30 » մարտի 2015թ.

N 39

ք. Ստեփանակերտ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային Ժողովի 2015 թվականի մայիսի 03-ի հերթական ընտրությունների ընթացքում իրավախախտումների վերաբերյալ հաղորդումների քննարկման նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետությունը բարձրացնելու և գործունեությունը համակարգելու նպատակով ժամանակավոր աշխատանքային խումբ ստեղծելու մասին

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային Ժողովի հերթական ընտրություն նշանակելու մասին» թիվ ՆՀ-15-Ն առ 12.02.2015թ. հրամանագիրը, ղեկավարվելով «Դատախազության մասին» ԼՂՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով և 25-րդ հոդվածով և ԼՂՀ Կառավարության թիվ 117-Ն առ 04.03.2015թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային Ժողովի 2015 թվականի մայիսի 3-ի հերթական ընտրության նախապատրաստման և անցկացման գործընթացում ընտրական հանձնաժողովների անջակցելու մասին» որոշման համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային Ժողովի 2015 թվականի մայիսի 3-ի հերթական ընտրությունների անցկացման ընթացքում մարդու և քաղաքացու՝ օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ պատշաճ դատախազական հսկողություն իրականացնելու, քաղաքացիների ու իրավաբանական անձանց դիմում-բողոքները քննարկելու և ընթացքավորելու նպատակով

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Ստեղծել ժամանակավոր աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

1) Գաբրիելյան Կարեն Գեորգիի ԼՂՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության բաժնի պետ (խմբի ղեկավար)

2) Միրզոյան Վիգեն Վլադիմիրի ԼՂՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման բաժնի ավագ դատախազ (խմբի անդամ)

3) Գաբրիելյան Գավիթ Սլավայի

ԼՂՀ գլխավոր դատախազության
պետական շահերի պաշտպանության
բաժնի դատախազ (խմբի անդամ)

2. Աշխատանքային խմբին՝

ա) քննարկման ընդունել առավել բարդ և հասարակական հնչեղություն ունեցող՝
ընտրական իրավունքի խախտումների հետ կապված հաղորդումները, լուծել դրանց
ենթակայության հարցերը,

բ) ապահովել գործնական աջակցություն Ստեփանակերտ քաղաքի և շրջանների
դատախազություններում ընտրական իրավունքի խախտումների փաստերով հաղորդումների
քննարկմանը,

գ) ընտրական իրավունքի խախտումների փաստերով նախապատրաստված
նյութերի և հարուցված քրեական գործերի ամփոփման արդյունքներով պատրաստել և
սահմանված կարգով գլխավոր դատախազին ներկայացնել համապատասխան
տեղեկատվական-մեթոդական ցուցումների նախագծեր:

3. Ստեփանակերտ քաղաքի, շրջանների դատախազներին՝

ա) ընտրախախտումների վերաբերյալ հաղորդումները քննարկել և ընթացք տալ
հնարավորինս սեղմ ժամկետներում,

բ) նախապատրաստված նյութերի և հարուցված քրեական գործերի, դրանց
ընթացքի մասին հաղորդումները ուղարկել ԼՂՀ գլխավոր դատախազություն,

գ) բարդ ու տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տվող հարցադրումներով
միասնական պրակտիկա ապահովելու նպատակով, անհրաժեշտության դեպքում,
խորհրդակցել խմբի ղեկավարի հետ:

4. ԼՂՀ գլխավոր դատախազության աշխատակազմի հանրային կապերի բաժնի
պետ Կ.Ե. Գաբրիելյանին՝

ա) ուսումնասիրել զանգվածային լրատվության միջոցներում ընտրական
իրավունքի խախտումների վերաբերյալ հրապարակումները, դրանց մասին անմիջապես
իրազեկել աշխատանքային խմբին՝ սահմանված կարգով քննարկելու և արդյունքների մասին
համապատասխան լրատվության միջոցներին հաղորդումներ ուղարկելու համար:

բ) կազմակերպել ընտրական իրավունքի խախտումների քննարկման և կայացված
որոշումների օպերատիվ լուսաբանումը՝ ապահովելով դրանց հրապարակայնությունն ու
թափանցիկությունը:

5. Խմբի ղեկավարին՝

ա) յուրաքանչյուր շաբաթվա երկրորդ օրը, մինչև ժամը 11:00-ն, ամփոփ տեղեկանք
ներկայացնել ԼՂՀ գլխավոր դատախազին՝ ընտրական իրավունքի խախտումների
վերաբերյալ ստացված հաղորդումների, դրանց քննարկման ընթացքի և արդյունքների
մասին,

բ) գեկուցման ներկայացված տեղեկատվությունն, անհրաժեշտության դեպքում,
շրջաբերական նամակների տեսքով ուղարկել ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի և շրջանների
դատախազներին:

6. Սույն հրամանի կատարման շրջանակներում դատախազության
ստորաբաժանումների գործունեության համակարգման պարտականությունը դնել ԼՂՀ
գլխավոր դատախազի տեղակալ Սերգեյ Յուրիի Ստեփանյանի վրա:

7. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում են ինձ վրա:

8. Հրամանն ուղարկել LՂՀ գլխավոր դատախազի տեղակալներին, LՂՀ գլխավոր դատախազության ավագ դատախազին ու դատախազին, բաժինների պետերին և LՂՀ քաղաքապետախազներին:

9. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Արդարադատության երրորդ դասի
պետական խորհրդական**

Ա.Ա.Մոսիյան